№ 93 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16 **1894** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16 № 93

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք էլ այդ ենք պահանջում. Միջնադարեան ձևեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նաւթային գործերը. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրութեան, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էլեկտրականութեան հարիւրամեակը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐԱԼ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Շվեյցարիայից.

ՄԵՆՔ ԷԼ ԱՅԴ ԵՆՔ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Վեհափառ Կաթողիկոսը, Թէհրանի հայոց կօլօնիային ուղղած մի կոնդակի մէջ, հետևեալ զեղեցիկ խօսքերն է ասում.

„Յամենայն գործս և հաստատութիւնս հիմնական պայման յաջողութեան և յառաջադիմութեան կարգ ու կանոն համարին. ապա ուրեմն անհնարին թուին բարիք անդ ուր ոչ գոյ կանոն, զի ի բացակայել կանոնի իւրաքանչիւր ոք բնականապէս զիւր կամն կանոն համարի“:

Ահա հէնց այդ կարգ ու կանոնն է խնդրում ամբողջ հայոց հասարակութիւնը, ահա հէնց այդ կարգ ու կանոնի ըսկզբունքն է, որ մեզ անդադար ստիպում է բողոքել այն սանձարձակ կամայականութեան դէմ, որ հայոց հոգևորականութիւնը գործ է դնում մեր դպրոցական և եկեղեցական գործերում, ոտի տակ տալով ամեն տեսակ կարգ ու կանոն, վնասելով հիմնարկութեան գոյութեանը և սառնութիւն գցելով ժողովրդի և այդ հիմնարկութեան մէջ:

„Մենք պահանջում ենք,—ասացինք մենք „Մշակի“ № 84-ի առաջնորդողի մէջ,—որ բարձր իշխանութիւնը թոյլ չը տայ, որպէս զի այս և այն պաշտօնեան, ով և լինի նա, ինչ դիրք և ունենայ նա, խախտի օրէնքը, կարգը, ժողովրդի իրաւունքը, կամ հիմնարկութեան կանոնադրութիւնը“:

Եւ անչափ ուրախ ենք, որ այսօր հայոց կաթողիկոսի պաշտօնական կոնդակի մէջ արձանագրված ենք տեսնում այդ հիմնական սկզբունքը, մի սկզբունք, առանց որի չէ կարող գոյութիւն ունենալ ոչ մի հիմնարկութիւն, առանց որի անձնական կամայականութիւնը և բռնութիւնը կարող են կլանել և ոչնչացնել ամեն բան:

Տարաբաղդաբար, կաթողիկոսական կոնդակի մէջ արձանագրված այդ ճշմարտութիւնն է, որ ոտի տակ է տրվում իրականութեան մէջ, դարձնելով այդ խելացի և օգտաւէտ ճշմարտութիւնը մի մեռած խօսք, մի անմիտ ֆրազա:

Մի տեղ առաջնորդը ոտի տակ տալով դպրոցի՝ երկար տարիներ գոյութիւն ունեցող կանոնադրութիւնը, չէ ուզում ճանաչել ոչ ժողովուրդ, ոչ հոգաբարձութիւն, ոչ կարգ և ոչ կանոն:—Ապացոյց ձեզ Շուշին:

Մի այլ տեղ, 12 հոգուց բաղկացած հոգաբարձութիւնը, արհամարհելով 40 տարիներից ի վեր գոյութիւն ունեցող կանոնադրութիւնը, հակառակ կանոնի, հակառակ օրէնքի, հակառակ հասարակ լոգիկայի, 3 ձայնով տեսուչ է ընտրում:—Ապացոյց ձեզ Ներսիսեան դպրոցը:

Մի երրորդ տեղ, եկեղեցական գործերի ներկայացուցիչը, ընտրութիւնների ժամանակ, ոտի տակ տալով գոյութիւն ունեցող կարգերը, հիմնական կանոնները, փորձում է զրկել ծխականներին ընտրողական ձայնից, փորձում է ճնշել, սահմանափակել ժողովրդի ծխական իրաւունքները:—Ապացոյց ձեզ Թիֆլիսի ընտրութիւնները:

Ժողովուրդը երէցփոխներ է ընտրում, նրանց յանձնելով եկեղեցական գումարները և հաշիւները: Անցնում է նշանակած ժամանակամիջոցը և երէցփոխները հակառակ օրէնքի, հակառակ գոյութիւն ունեցող կանոնների, չեն ուզում ոչ հաշիւ տալ, ոչ դուրս գնալ պաշտօնից և ոչ ժողովուրդ ճանաչել: Եւ հոգևորականութիւնն էլ այդպիսիներին սիրտ է տալիս, առաջ է քաշում:—Ապացոյց ձեզ ոչ միայն Քամոյանց եկեղեցին, այլև բոլոր հայոց եկեղեցիները:

Մի տգէտ, անբարոյական տերտէր համարձակվում է ոտի տակ տալ դիսցիպլինայի տարրական կանոնները, և ամենաանզուսպ յանդգնութեամբ վիրաւորել եկեղեցու մի բարձր պաշտօնեայի, յարգված եպիսկոպոսի պատիւը և անունը, այնպիսի ակնարկութիւններ անելով, որ միայն փողոցային թերթերում կարող են տպագրվել: Եւ այդպիսի տերտերները մնում են անպատիժ, առանց պատասխանատուութեան: Ապացոյցներ որքան կամենաք:

Մի տեղ եօթերորդ աստիճան է պահանջվում պսակ թոյլ տալու համար. մի այլ տեղ չորրորդ աստիճանն էլ է բաւական համարվում, իսկ երրորդ տեղ հինգերորդ աստիճանն անգամ պսակի իրաւունք չէ տալիս: Արդ, հարցնում ենք, ո՞ւր է այդտեղ կարգը, կանոնը, որոշ օրէնքը:

Եւ այլն, և այլն, և այլն:

Կամայականութիւն եկեղեցական-վարչական գործերում. անկարգութիւն եկեղեցական հաշիւների մէջ. անտերութիւն վանքերում, եկեղեցիներում, կալուածական և դպրոցական հարցերում:—ահա այն սրբոյր պատկերը, որ այսօր դրված է ամբողջ հայ հասարակութեան առաջ:

Այո, տխուր, շատ տխուր է պատկերը...

Եւ այդ տխուր պատկերը տեսնելով անկարելի է ուշադրութիւն չը դարձնել կաթողիկոսական կոնդակի այն խօսքերի վրա, թէ՝ „ամեն մի գործի և հիմնարկութեան մէջ աջողութեան և առաջադիմութեան հիմնական պայմանը կարգ ու կանոնն է. անհնարին է բարիք տեսնել այնտեղ, ուր չը կայ կանոն. որովհետև ուր կանոն չը կայ, այնտեղ բնականաբար ամեն մարդ իր կամքը կանոն է համարում“

Մենք էլ հէնց այդ ենք ասում, հէնց այդ ենք պահանջում: Մենք պահանջում ենք, որ հիմնարկութիւնների մէջ կարգ և կանոն հաստատվի և կամայականութիւնը սանձահարվի:

Մենք ուզում ենք, որ այդ զեղեցիկ խօսքերը խօսքեր չը մնան, այլ իրագործվեն և արդիւնք ցոյց տան:

ՄԻԶՆԱԴԱՐԵԱՆ ՁԵՒԵՐ

Մարդկանց հալածելու, այս կամ այն ասպարէզից հեռացնելու համար՝ վերջին ժամանակներս գործ են դրվում այնպիսի միջոցներ, որ մեզ յիշեցնում են միջնադարեան բարքերը, մարդկութեան վայրենի ժամանակները: Եւ հայրենի սրբութիւններ, և եկեղեցի, և նախնիների շիրիմներ՝ բոլորը ծառայեցնում են անարդար զբաղարտութիւնների, ամենաստոր մեղադրանքների համար:

Գոնէ գիտութեան, ուսման զարգացումը մեր մէջ ազատ էր զգում իրան եզու

տարածվում է ժողովրդական մեծամասնութեան մէջ։

Նրա դէմ գործողների միջոցները վաղուց դատապարտված են։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՒԹԱՑԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Մենք իր ժամանակին հաղորդեցինք, որ ներկայ տարվայ մարտ ամսի 15-ից սկսվեց դաշնակցութեան կէրոսինի վաճառումը։ Սակայն գործերի վերին աստիճանի անորոշ դրութիւնը մեզ թոյլ չէր տալիս գործի ընթացքի մասին որ և է որոշ տեղեկութիւն տալ։

Այդքանը միմիայն կարող ենք ասել.—առաջին անգամ, երբ Եւրոպայի շուկաներում պաշտօնական կերպով յայտնվեց, թէ Բաքու—Բաթումի ֆրախտից 5 կօպէկ պակասեցրած է, Ամերիկայի կէրոսին վաճառողների մէջ մեծ իրարանցում ընկաւ և դրան անմիջապէս հետևեց այն, որ Լօնդոնի, Անտվերպէնի և Համբուրգի շուկաներում Ամերիկայի կէրոսինի գնից 6 կօպէկ պակասեցրին։

Մեր կառավարութիւնը՝ տեսնելով այդ և նը-պատակ դրած լինելով անպատճառ օգնած լինել մեր կէրոսինագործներին, որոշեց արտասահման տանելի կէրոսինի ֆրախտից երկրորդ 5 կօպ-պակասեցնել։ Այդ մի այնպիսի քայլ էր, որ ստիպեց ամերիկացի վաճառականին սանձահարել իր չահագիտական ձգտումները, կրքերը։

Բայց և այնպէս, մերոնք շարունակում էին կէրոսինի արտահանումը, թէպէտ և դանդաղ։ Մարտի 15-ից մինչև օգոստոսի 1-ը առաջին խումբը արտահանել է 9,426,330 պուդ, իսկ երկրորդը՝ 2,496,730 պուդ։ Արտահանած քանակութեան համար մինչև օգոստոսի 1-ը փող դեռ չէին ստացել։

Այդ հանգամանքը վերին աստիճանի ծանր ներգործութիւն էր անում մեր կէրոսինագործներից շատերի վրա, մանաւանդ այն տեսակ կէրոսինագործների վրա, որոնք կարծում էին, թէ դաշնակցութիւն կազմելով՝ գորդեան հանգոյցը լուծեցին, և որոնք անվերջ օգուտներ էին երազում։ Այդ տեսակ միամիտների թիւը, ցաւելով պէտք է նկատենք, մեծամասնութիւն է կազմում։ Ահա թէ ինչու համար ամեն կողմից անդադար լսվում էին յուսահատական հառաչանքներ և տրտունջ։

Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Հանգամանքները այն աստիճանի նեղ դրութեան մէջ էին դրել դրանց, որ բոլորովին անկարող էին պարզել իրանց համար իրերի դրութիւնը։ Վնասը մեծասին էր հետևում։ Ապրանքը ուղարկում են, փող չեն ստանում։ Շատերը նոյն իսկ յոյսերը կտրել էին փող ստանալու։

Պէտք է դաշնակցութեանը վաճառելու համար կէրոսին տային համաձայն պայմանի։ Բայց ինչ աղբիւրից։ Փող չը կայ, որ նաւթ առնվի կէրոսին պատրաստելու համար։ Նաւթահանքատէր-կէրոսինագործները էլի մի կերպ հաշտվում էին այդ հանգամանքի հետ, գործադրելով իրանց սեփական հանքերի նաւթից։ Բայց ինչ անէր այն խեղճ գործարանատէրը, որը սեփական նաւթ չունէր և ստիպված էր գնել, այն էլ այն ժամանակ, երբ նաւթի պուդը, չադրուանների բացակայութեան շնորհիւ, Բալախանիում հազիւ կարելի էր գնել 4—4¼ կօպէկով։ Նա ստիպված էր իր հին պարտքերի վրա նորը աւելացնել։

Այսպէս թէ այնպէս, յուլիս ամսի վերջերին Բաքուում լուր տարածվեց, թէ դաշնակցութեան վաճառքների փողերը կամաց կամաց ստացվում են։ Շատերին այդ լուրը չմնծաւ, կեղծ էր երևում, կարծում էին թէ կատակի համար են տարածել այդ լուրը։ Բայց և այնպէս այդ լուրը ստուգվեց և օգոստոսի 2-ին, մարտ, ապրիլ և մայիս ամիսներում արտահանած կէրոսինի պուդի համար ստացան 2 կօպէկ ի հաշիւ։

Ֆ. Մ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Օգոստոսի 9-ին

Այսօր բժիշկ Լեոն Տիգրանեանց երդումն տուեց և ստանձնեց Երևանի քաղաքագլխի պաշտօնը։

Նոր քաղաքագլուխը, ստանձնելով իր պաշտօնը, մի քանի անյետաձգելի հարցեր ունի լուծելու, որոնցից մեծ կախում ունի քաղաքի բարօրութիւնը։

Տարիների ընթացքում թէ մամուլի մէջ և թէ մասնաւոր շրջաններում բողոքվել է քաղաքի անմաքրութեան դէմ. անցնում էք փողոցներով, ամեն տեսակ կեղտոտութիւններ լի են. թէպէտ մեծ փողոցների մաքրութեան վրա վերջին ժամանակներս քիչ թէ շատ ուշադրութիւն դարձնվում է, սակայն նոյն անմաքրութեան բներն են ներկայացնում այսօր էլ, ինչպէս եղել են միշտ, խուլ, նեղ, ծուռ ու մուռ փողոցներ, ուր ապրում են համեմատաբար աղքատ և ոգէտ դասակարգի մարդիկ։ Ահա, այդ յետ ընկած տեղերն են, որ պէտք է մաքրել տալ։ Ոչ քից ծածուկ չէ, որ 93 թուի խօլերան ամենից շատ զոհեր տարաւ Երևանից և յատկապէս այդ նեղ, յետ ընկած փողոցներում ապրող ընտանիքներից։ Այդ կեղտոտ փողոցները ոչ միայն խօլերայի, այլ և ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների ապաստարան են հանդիսանում։

Մաքուր ջուր ունենալը նոյնքան անհրաժեշտ է Երևանին, որքան մաքուր փողոցներ և բաղեր։ Ժողովուրդը գործ է ածում այժմ բաղերով անցնող ամեն տեսակ աղտոտութիւններ իր մէջ լուծած ջուրը, որից մեծապէս վնասվում է։ Ցդէտ ընտանիքները, մանաւանդ թուրքերը, համոզված լինելով, որ ջուրը անմաքրութիւն չէ պահում իր մէջ, բաղերում եղած աղբի մեծ մասը ածում են ջրի մէջ, որից մի քանի տուն ներքև խմելու ջուր են վեր առնում, կամ կերակրի ամաններն են լուանում։—Ցենք կասկածում, որ ներկայ քաղաքագլուխը, իբրև բժիշկ, իր ամբողջ ոյժը գործ կը դնի քաղաքի առողջապահական դրութիւնը բարելաւելու համար։

Էլ չենք խօսում ներկայումս ոչ պակաս էական հարցերի մասին, ինչպէս հրապարակում ծախվող մթերքների, հացի, մսի և առհասարակ ուտելեղէնների չափաւոր գներով ծախվելու վրա հսկելը, որով կաղատի քաղաքի չքաւորներին դանդաղ այաղչիների, հացավաճառների, մսավաճառների կամայականութիւնից։

Մեծ յոյս ունենք, որ խնամիութիւնն ու կաշառակերութիւնը բժիշկ Տիգրանեանցի քաղաքագլխութեան օրով տեղի չեն ունենայ։

Բ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 15-ին

«Արձագանքը» վշտացել է «Մշակի» Նախընթաց համարում տպված իմ Նամակից Գ. Աբիմեանի հուշկաւոր դարձած հաշիւների մասին։ Չէի կարծում, որ այդ թերթը այդքան ապերախտ կը լինի դէպի ինձ, որ կատարեցի նրա խնդիրը։ «Արձագանքը» խնդրում էր, որ ուրիշները պարզեն Աբիմեանի անպարզելի հաշիւները։ Իբրև պաշտօնական անձ, ես պարտք համարեցի պարզել, թէև մասամբ միայն։ Իմ հաղորդածները զուտ փաստեր էին, որոնց դէմ ոչինչ չէր կարելի ասել։

Սակայն, ինչպէս երևում է, շանտաժիստները փաստեր չեն սիրում։ Եւ Արդար Ցովհաննիսեան, արհամարհելով փաստերը, շտապում է ինձ դրպարտել։ Իր սպասաւորներից մէկի բերանով (ոմն Հրիման) նա կողմնակի կերպով «Արձագանքի» վերջին համարի մի ֆելիէտոնում ակնարկում է, թէ իբր ես ժողովարարութիւններ եմ արել Գրիգոր Արծրունու և Բաֆֆիի արձաններին և գրուածների օգտին և հաշիւ չեմ տուել։

Պատիւ ունեմ յայտնել հին-ջուղայեցի-իտալացի Ավգերիս Իոանիսեանին, աղնութեան այդ տիպարին, շիտակութեան և վեհանձնութեան հերոսին, բոլոր հաշիւների մէջ անսխալ դիրեկտորին, բոլոր տառապեալների օգտին հաւաքած գումարների օրինակելի պաշտպանին (երդվում եմ Քարամեանների ազնութեամբ), բոլոր իրան պահ տրված մասնաւոր և հասարակական մանր ու խոշոր գումարների ճշգրիտ հաշուետուին (երդվում եմ Կանայեանների և Լօրդերի խելքով), բոլոր սիմօնականների թշնամուն (երդվում եմ Ահրիմանների պատուասիրութեամբ), բոլոր «յաղագս և սակս» Էջմիածնեան և Գրիգորեան լումաների արթուն դանձապահին (երդվում եմ եղբ. Միրզոյեանների գործակատար Մախլասի և բարօն Կուչչենբախի կոմիսիոնաժեորի ազնուական ծառայութեամբ), պատիւ ունեմ յայտնել ռուսաց ЗОЛОТО (ոսկի) բառի կատաղի թշնամի և рёвъ (մռնչիւն) բառից սարսափող բազմատիտղոս Ցովհաննիսեանին, որ ես՝ ներքոյ ստորագրեալս, ոչ մի ժողովարարութիւն չեմ արել ոչ Արծրունու արձանի, ոչ Բաֆֆիի արձանի և ոչ Արծրունու գրուածների օգտին։

Ես պատիւ եմ ունեցել լինել Բաֆֆիին արձան կանգնեցնող յանձնաժողովի վեց անդամներից մէկը։ Այդ ճիշդ է։ Բայց ես ոչ մի ժամանակ ոչ ոքից և ոչ մի կօպէկ չեմ ստացել այդ նպատակով։

Գալով հանդուցեալ Գրիգոր Արծրունու արձանին և գրուածներին, ցաւում եմ, որ ես մինչև օրս չեմ կարողացել որ և է ժողովարարութեամբ նպաստել այդ վեհ գործին։ Ցաւում եմ, որովհետև իմ սէրը և յարգանքը այնքան անկեղծ են դէպի տաղանդաւոր հրապարակախօսի յիշատակը, որ ես քաղցր պարտք կը համարէի որ և է կերպ, բացի բարոյականից, նրանպէս էլ արտայայտել այդ սէրը և յարգանքը։ Կարող եմ հաւատացնել ծերութիւնից արդէն դէպի զառամութիւն քայլող Աբգար Ցովհաննիսեանին, որ այդ տեսակ յարգանքի երբէք չի արժանանայ նրա ապագայ յիշատակը...

Առ այժմ այսքան։

Շիրվանզադէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Թիւրքաց կառավարութիւնը մտադրութիւն ունի չը թոյլ տալ, որ գաղթականները վերադառնան իրանց հայրենիքը և այդ նպատակով էլ մինչև այսօր անցագրեր չէ տալիս։ Մեզ զարմացնում է Թիւրքաց կառավարութեան այդ անարդար և մի և նոյն ժամանակ անմիտ ցանկութիւնը։ Եթէ խաղաղ ժողովրդին թոյլ չէ տրվում բնակվել իր հայրենի երկրում, իր բնիկ ծննդավայրում, էլ ուր պէտք է դիմի այդ ժողովուրդը, որտեղ պէտք է գտնի ապաստան իր համար։ Ինչպէս երևում է, Թիւրքաց կառավարութիւնը աւելի լաւ է համարում իշխել ամայի, անբնակ անապատների և քիւրդ հրոսակների վրա, քան խաղաղ և կուլտուրական հայ ժողովրդի վրա։

—

Մեզ հեռագրում են Էջմիածնից, օգոստոսի 15-ից. «Շուշու առաջնորդ Այվազեան եպիսկոպոսը և Շուշու թեմական դպրոցի երկու հոգաբարձու հեռագրով կանչված են Էջմիածին»։

—

Մեզ հեռագրում են Իգդիրից, որ պրոֆէսոր Անդրէաս Արծրունին, Արարատի վրա մի քանի գիտական հետազօտութիւն անելուց յետոյ, ճանապարհ ընկաւ դէպի Կողբ և Կաղզուան։

—

Կովկասի Բարեգործական ընկերութիւնը Թիֆլիսում բացել է իր սեփական դրասենեակը։ Այդ

մենք չենք կարող մեզ արգելել առաջ բերել Ժորէսի ճառից մի քանի կտորներ։

«Ես երբէք սովորութիւն չեմ ունեցել և ես դիտաւորութիւն չունեմ թունաւորել մեր վիճաբանութիւնները և առաջ բերել բուռն ինցիդէնտներ։ Ես միայն ինձ նպատակ եմ դնում, որ և իրաւունք ունեմ, անել բոլորին յայտնի և պաշտօնական թղթերում արձանագրած անցքերից բարոյական և քաղաքական ընդհանուր եզրակացութիւններ։ Եւ եթէ ինձ հարկաւոր է որոշել քաղաքական բարձր անձնաւորութիւնների դերը և պատասխանատուութիւնը, ես այդ կը կատարեմ յարգելով ճշմարտութիւնը, յարգելով այս ժողովի և իմ պատիւը։

«Հարկաւոր է պակասեցնել թշուառութիւնները, որոնք բազմանում են հասարակութեան ստորին խաւերում ի դիմաց այն սկանդալների, որոնք բազմապատկվում են վերին խաւերում» (բուռն ծափահարութիւններ)։

«Ձեր օրէնքը, այնպէս, ինչպէս դուք էք խմբագրել, լիակատար չի լինի, չի ունենայ ամբողջացրած միաք, ամբողջացրած զօրութիւն, եթէ դուք նրան չը միացնէք մեր առաջարկած յաւելուածը։

«Դուք ուզում էք հետամուտ լինել անիշխանական գաղափարին մինչև նրա աղբիւրը, ասում էք դուք։ Շատ լաւ. ես ձեզ ասում եմ. «Միք՝ կանգնի կէս ճանապարհի վրա. փորեցէք, քրքրեցէք, մինչև որ կը գտնէք ոճիրների բուն աղբիւրը. գնացէք մինչև խղճմտանքների խորքը։—Այն ժամանակ մի հարց է առաջ գալիս. որոնք են այն բարոյական և հասարակական աղդեցութիւնները, որ այսօր նախապատրաստում են ուղեղները՝ ընդունել անիշխանական գաղափարներ»։

Ատենաբանը՝ քննելով այդ ազդեցութիւններից մի քանիսը, շարունակում է.

«Մի կէտ կայ, որի վերաբերմամբ բոլորը համաձայն են. այդ այն է, որ ոչ մի բան մեր դէմոկրատիայում չէ կարող այնչափ յեղաշրջել մտքերը, որչափ բարձրից բղխած զեղծումների օրինակները (բուռն ծափահարութիւններ)։

«Խորհրդի պ. նախագահը մեզ ասում էր, որ անիշխանականութիւնը կայանում է նրանում, որ նա նախ և առաջ արհամարհում է իշխանութիւնը։ Ես նրան հարցնում եմ՝ երբ ժողովրդի ներկայացուցիչները կածկածելի գործերով վայր են գցում ազգային պատգամաւորութեան պատիւը, մթթէ նրանք աւելի չեն խախտում իշխանութեան հիմքը, քան մի քանի յայտնի խօսքեր (կրկին ծափահարութիւններ)։

«Բայց դուք, խորհրդի պ. նախագահ, դուք՝ մեծամասնութեան անդամներ, որ քուէարկում էք օրէնքի ընդունելութիւնը, մտածել էք արդեօք այն բոլոր բարոյական անկումների մասին, որոնք ծածկվում են ֆինանսական գործերի ետևը»։

«Մթթէ դուք կարծում էք, որ կը գտնվի որ և իցէ մէկը, որ անտարբեր գտնվէր, որ սարսափահար չը լինէր այն բոպէին, երբ քննում էին Պանամայի գործերը. երբ երկիրը տեղեկանում էր, որ իր թափած հարիւրաւոր միլիոններից երկու երրորդականից աւելին վատնվել է. որ բարձր ֆինանսը բարեկամ է եղել հասարակական իշխանութիւնների հետ, երբ մինիստրները կանչվում էին երդուեալների դատարանը, երբ քննիչ յանձնաժողովի առջև գոռող ուրացումներին հետևում էին փայլուն մերկացումներ և դատապարտութիւններ, երբ նա տեսաւ բոլոր այս անձնաւորութիւններին քննիչ յանձնաժողովի առջև, ուր՝ ինչպէս մի պտտող շրջանի վրա խառնվում էին բոլոր գոյները՝ պարլամենտական և բանտային գոյներ (բուռն ծափահարութիւններ)։

«Ա՛հ, դուք երևակայում էք, որ այս ոչինչ հետևանք չունեցաւ։ Յիշեցէք հին բանաստեղծի համեմատութիւնը. «փոշին ցեխի ծարաւ քոյրն է». և դուք կասէք, որ անիշխանական փոշին կապիտալիստական ցեխի ծարաւ քոյրն է, որը չորացրել է ձեր օրինաւոր հրահանգները (բուռն ծափահարութիւններ)։

«Հարկաւոր չէ կանգնել կէս ճանապարհի վրա, հարկաւոր է որ դուք գնաք մինչև անիշխանական ոճրի այդ ֆինանսական արմատը։»

Ժորէսը խօսելով այն արատի մասին, որ առաջացել է վերջին 15 տարիներս քաղաքականութեան, կապիտալի և մամուլի սերտ բարեկամութիւնից, աւելացնում է. «Այս է պատճառը, որ դուք էլ չէք իմանում որն է ճշմարիտը, որ ուղեղից դուրս գալիս և որն է սուտը, որ անդուկից է դուրս գալիս»։

Նա վերջացնում է իր ճառը, (որը տեղի սղութեան պատճառով չը կարողացանք ամբողջութեամբ առաջ բերել), հետևեալ պարբերութեամբ.

«Որովհետև դուք ուզում էք խիստ լինել դէպի ապստամբները, եղէք նոյնպէս խիստ և դէպի ապականիչները։ Այդ հարկաւոր է ի կրթութիւն նոր սերունդների, որ պէտք է դան նստեն այս նստարանների վրա։

«Հարկաւոր է, որ դուք մի վկայութեամբ կենդանի դարձնէք այն կապը, որ գոյութիւն ունի մեղապարտ քաղաքագէտի և ապստամբ անիշխանականի մէջ, և երբ մի օր մի և նոյն նաւը աքսորման կը տանի դէպի հեռու և տենդաբեր երկիրները (ծափահարութիւններ) կասկածելի քաղաքագէտին ու անիշխանականին, նրանք կարող են խօսակցութիւն սկսել և նրանք միմեանց կերուան, որպէս մի և նոյն հասարակական կարգի երկու՝ մէկը միւսին լրացնող պատկերներ» (բուռն ծափահարութիւններ)։

Ս. Շխեանց

նոյն չինութեան մէջ, որ գտնվում է Սէրգիէվսկի փողոցում, Սօլօլակ, պէտք է զետեղվի և ընկերութեան կենտրոնական մատենադարան-ընթերցարանը: Մատենադարան-ընթերցարանը բացվելու է սեպտեմբերից: Ցոյս ունենք, որ ընկերութեան խորհուրդը այլ ևս չի յետաձգի այդ հիմնարկութեան բացումը, որը մի քանի տարի է արդէն որոշված և վճռված է:

—

Օգոստոսի 12-ի երեկոյեան երկրագործութեան և պետական կալուածների մինիստր Երմօլով Պետերբուրգից ճանապարհ ընկաւ դէպի Կովկաս:

—

Ստացանք Գաբրիել քահանայ Տէր-Գաբրիէլեանցից նրա կազմած մի նոր դասագիրքը՝ «Քրիստոնէական վարդապետութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ» անունով: Դասագիրքը յօրինված է պետական գիմնազիաների հայ աշակերտների համար, և ինչպէս յայտնում է հեղինակը, նա կազմել է Սալլանթեանցի և Մսերի դասագրքերից օգուտ քաղելով. դինն է 24 կոպէկ: Այդ աշխատութիւնը հաւանութիւն է գտել Էջմիածնի կողմից և հրատարակութեան թոյլտուութեան տակ ստորագրված է այսպէս. «Նախագահ Արիստակէս եպիսկոպոս»: Թէ որ Արիստակէս եպիսկոպոսն է, ինչ բանի նախագահ է, այդ յայտնի չէ: Զարմանալի է, որ պաշտօնական գրասենեակներ են տալիս, տակն էլ ստորագրում, և յայտնի չէ թէ այդ ինչ ժողովի կամ հիմնարկութեան նախագահ է:

—

Գեներալ Ալխազովին, որը այժմ Օսմանեան երկրի 3-րդ զօրաբաժնի հրամանատար է, ինչպէս հեռագրում են Պետերբուրգից տեղական լրագիրներին, նրա ծառայութեան յիսնամեայ յօբելեանի առիթով շնորհված է ս. Ալէքսանդր Նեվսկու շքանշանը: Գեներալ Ալխազով գօրեցի հայ է: Նա իր զինուորական տաղանդը ցոյց տուեց վերջին ռուս-թիւրքական պատերազմում, երբ իր փոքրաթիւ զօրքով քշեց թիւրքերին Սուխումից, և ապա Կարսի բերդը առնելու ժամանակ ևս նա ցոյց տուեց իր զինուորական տաղանդը:

—

Կ. Պոլսի ռուսաց ընդհանուր հիւպատոսի նախաձեռնութեամբ Ղալաթիայում մի հանրամատչելի հիւանդանոց է հիմնվում ռուս ուխտաւորների և Կ. Պոլսով պատահմամբ անցնող ռուս ճանապարհորդների համար: Այժմ թիւրքաց մայրաքաղաքում կը լինեն ռուսաց երկու հիւանդանոցներ:

—

Մենք զարմանում ենք, թէ ինչու տեղական թեմական առաջնորդը չէ շտապում պաշտօնի հրաւիրել Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, որը օգոստոսի 4-ից արդէն հաստատված է: Դպրոցական տարին սկսվում է, հաղար ու մի գործ կայ, իսկ Սուրբենեան եպիսկոպոսը կաթողիկոսական կօնդակը ստացած լինելով, չը գիտենք ինչի է սպասում:

—

Նիժնի-Նովգորոդի տօնավաճառի կառավարիչ գեներալ Բարանով օգոստոսի 7-ին յայտարարեց, թէ խօլերա կայ տօնավաճառում: Մինչև օգոստոսի 1-ը քաղաքում խօլերայով հիւանդացել են 68 հոգի:

—

Նկատի ունենալով այն, որ ուսում առած այգեպանների անհրաժեշտ պահանջ է զգացվում Բագուի նահանգում, Բագուի դրամատէր Հաջի-Զէյնալ-Թաղիեվ, դեռ անցեալ տարի միջոցներ էր թոյլ տալ իր միջոցներով մի այգեգործական դպրոց բանալ Մարդագեան գիւղում: Ներկայումս, ինչպէս հաղորդում է «Каспій» լրագիրը, այդ թոյլտուութիւնը ստացվել է: Դպրոցին յատկացված է 300,000 ռուբլի:

—

Թիֆլիսի պահեստային մաքսատան կառավարիչ Սավինը մի նախագիծ է մշակել, այդ հիմնարկութիւնը վերացնելու համար: Հաղորդելով այդ, «Новое Обозрѣніе» լրագիրը աւելացնում է հետևեալը.—Թիֆլիսի վաճառականները մտադիր են դիմել բարձր իշխանութեան և պարզել այն դժուարութիւնները, որոնք կառաջանան տեղական առևտրի համար, եթէ յիշեալ նախագիծը իրագործվի:

—

ԵՐԵՒԱՆԻ գաւառի Բջնի գիւղից մեզ գրում են. «Ամսիս 7-ին, ճաշից յետոյ, Վեհափառ Կաթողիկոսը Բիւրականից Եղուարդ գիւղով անցնելով, եկաւ Էջմիածնապատկան Բջնի կալուածքը: Վեհափառը ճանապարհորդում էր ձիով, ուղեկցութեամբ Հմայեակ և Ներսէս վարդապետների, Խորէն Խրիմեանի և ուրիշների: Կալուածապատկան ընակարանը, ուր իջևանեց Վեհափառը, զարդարված էր կանաչով և ծաղկահիւսերով: Ցաջորդ առաւօտեան Վեհափառը ընդունեց շրջակայ գիւղերի ներկայացուցիչներին և գիւղացիներին, առաւօտեան շրջեց գիւղը, այցելեց Բջնիի հոյակապ վանքը, իսկ ճաշից յետոյ ուղևորվեց մօտակայ Ալափարսում գիւղը՝ տեսնելու նորակառոյց եկեղեցին: Ալափարսում երկար խօսեց գիւղացիների հետ, հարց ու փորձ արեց նրանց կացութիւնից, հողերից, ջրից և այլն, և թէյ ընդունելուց յետոյ ժամը 6-ին դարձաւ Բջնի: Ցաջորդ օրը, երեքշաբթի, բազմաթիւ ձիաւորների ուղեկցութեամբ ճանապարհ ընկաւ Աբարանով դէպի Բիւրական:» Մեր մի ուրիշ թղթակից, նոյնպէս հաղորդելով այդ ճանապարհորդութեան մասին, աւելացնում է, որ Վեհափառը առհասարակ անդադար ճանապարհորդում է Էջմիածնից Բիւրական, կամ Բիւրականից դէպի Էջմիածին:

—

ԹԷՕԴՈՍԻԱՑԻՑ մեզ գրում են. Այստեղի ժողովուրդը շատ անտարբեր վերաբերվեց դէպի սովեալների և գաղթականների վիճակը. ոչ ոք յանձն չառաւ մի օրինաւոր ժողովարարութիւն անելու: Ի դէպ, այստեղ ևս տգէտները գլուխ են բարձրացրել և մտադրութիւն ունեն մի քանի աղաներից ստորագրութիւն մուրալով՝ աջողեցնել իրանց քահանայ ձեռնադրվելը»:

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են. «Հասարակ ժողովուրդը յուսահատված է, որովհետև սիմինդրի առևտուրը սաստիկ ընկած է: Չէ թոյլատրվում սիմինդր արտահանել և գիւղերում հաղարաւոր պուդերով անվաճառ է մնում բերքը:»

—

ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ վաղուց յարուցված էր տեխնիկական դպրոց հիմնելու հարցը. բայց դրամական միջոցների պակասութեան պատճառով յետաձգվում էր տարուց տարի: Այժմ այդ դպրոցը հիմնելու հարցը մօտ է իր իրագործման, որովհետև Աստրախանի դրամատէր տիկիններից մէկը գնում է Կովալչիի գործարանը և տունը, որպէս զի յատկացնի դպրոցին: Աստրախանը Վոլգայի և Կասպից ծովի մէջ կատարվող նաւագնացական ճանապարհի վրա գտնվելով, միշտ մեծ կարիք է զգացել նաւային պաշտօնեաների և մեքենագործների, ուստի հիմնվելի դպրոցը պէտք է գլխաւորապէս աչքի առաջ ունենայ այդ կարիքը:

—

ՆՈՒԽՈՒՑ «Кавказъ» լրագրին գրում են հետևեալը. «Այս օրերս մենք լսեցինք, թէ ինչպէս Նուխու գաւառի Վարդաշէնի բնակիչները գանգատվում էին իրանց վիճակից: Ահա թէ բանն ինչումն է: Վարդաշէնի բնակիչները, բարձր իշխանութեան կարգադրութեամբ, ունեն իրանց դատաստանական քննիչ, որը պարտաւոր է բնակվել Վարդաշէն գիւղում, որպէս կենտրոնում: Այն ինչ, անհասկանալի պատճառով, քննիչը ապրում է Նուխում: Վարդաշէնի բնակիչները դատաստանական գործերով կանչվում են Նուխի, և այդ ճանապարհորդութեան վրա գործ են դնում 3-ից մինչև 4 օր: Ամենքին յայտնի է, թէ որքան թանգ է ժամանակը բանւոր դասի համար, և այդ պատճառով չէ կարելի արդարացի չը համարել Վարդաշէնի բնակիչների գանգատները քննիչի դէմ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԼԷԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

—

Մեր դարը անուանում են շոգու և էլէկտրականութեան դար: Եւ յիրաւի, այդ երկու ոյժերին է պարտական մեր դարի գործարանական արդիւնաբերութիւնը այն հսկայական զարգացմամբ, որի նմանը չէ եղել պատմութեան մէջ նոյն իսկ մի քանի դարերի ընթացքում:

Առաջին դիտ անողները յաճախ չեն ենթադրում, թէ ինչ կարևոր և անդին նշանակութիւն ունեցող գործ են նրանք կատարել, բայց կան և այնպիսիները, որոնք իրանք լաւ զգում են այդ և ոգևորվում են նրա ապագայ զարգացման գաղափարով:

Այդ տեսակ համոզմունք ունէր այն երևելի գիտնականը, որը դտաւ էլէկտրականութեան ոյժի կենտրոնացման խտացման գաղտնիքը: Այդ գիտնականը—իտալացի Ալէքսանդր Վոյլտան էր:

Հարիւր տարի սրանից առաջ, 1794 թ-ի աշնանը, նա զանազան փորձերից յետոյ գտաւ էլէկտրական ոյժի շահագործութեան այն ձևը, որ յայտնի է Վոյլտայի սիւն անունով և որ նախնական կաղապարն է այժմեան էլէկտրական բատարէյների:

Նշանաւոր Ֆիզիկոս Արագօն, խօսելով Վոյլտայի գիւտի մասին, ասում է. «Վոյլտայի սիւնը, որ կազմված է զանազան տեսակ մետաղների՝ պղնձի, ցինկի միաւորումից և հեղուկի մի փոքր քանակութիւնից,—կազմում է մի գործիք, որից աւելի լաւը չէ հնարել մարդ, ի բաց չառնելով նոյն իսկ չոգեմեքենան և հեռադիտակը:»

Վոյլտան ծնվել է իտալական Կոմօ աւանում, մի հարուստ ընտանիքում: Նա իր ժամանակի նշանաւոր գիտնականներից էր. նա յայտնի է գիտութեան մէջ շատ նշանաւոր գիւտերով, որոնց պատկն է նրա անունը կրող՝ Վոյլտայի սիւնը:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Փիրաբաղար, օգոստոսի 1-ին

Ռաշտից կէս ժամվայ ճանապարհի վրա գտնվում է Փիրաբաղար գիւղը: Այդտեղից արդէն ըսկսվում է ծովային ճանապարհը մինչև Էնզէլի համանուն գետով: Փիրաբաղարը իսկապէս մի նաւահանգիստ է՝ փոքրիկ մարդատար և ապրանքատար նաւերի: Այդ գիւղի բնակիչները շատ քիչ են, մի քանի խանութպաններ և մի քանի մշակներ,—ահա ամբողջ գիւղի բնակութիւնը: Այդ նաւահանգստից են արտահանվում մեծ քանակութեամբ բրինձ և Պարսկաստանի միւս բերքերը դէպի Ռուսաստան: Այդտեղից են ներմուծվում նաև Ռուսաստանի զանազան տեսակ բերքերը, որոնք և Ռաշտի վրայով անցնում են դէպի Պարսկաստանի խորքերը, ինչպէս Ղազվին, Թէհրան, Զանջան և այլն: Նոյն այդտեղից են երթևեկում թէ դէպի Թէհրան կամ Պարսկաստանի այլ քաղաքներ գնացողները և թէ դէպի Ռուսաստան անցնողները:

Պարսկական կեղտոտութիւնը իր բոլոր ոյժով տիրում է Փիրաբաղարում. ցեխը և հաղար տեսակ անմաքրութիւններ թափված են հէնց նաւակի մօտ, ափի վրա: Հողատէրը, որին պատկանում է այդ գիւղը, հոգ չէ տանում ոչ մի բանի վրա. նա վաճառականներից ստանում է մեծ քանակութեամբ փող, որը «հաւայի» է կոչվում, բայց մի կոպէկ անդամ չէ ծախսում գիւղը մաքուր պահելու վրա:

Շոգենաւ գալու օրերը մի առանձին կենդանութիւն է ստանում այդ փոքրիկ գիւղը: Ցիապանները շարունակ ճանապարհորդներ են բերում և սպասում են նոր եկողների: Մի խօսք մարդ ձեռք զցած ժամանակ, մանաւանդ եթէ նա եւրոպական գլխարկ ունի, ամեն ճիգ են գործ դնում եռապատիկ և քառապատիկ քրէհ ստանալ: Այնուհետև նաւակով, գետով մեծ դժուարութեամբ ճանապարհորդը գնում է մինչև Էնզէլի: Սրանից մի երկու տարի առաջ լուր կար, իբր թէ այդ գետը պիտի խորացնել տար ռուսաց հիւպատոսը, վաճառականների հաշուով, երթևեկութիւնը հեշտացնելու նպատակով, սակայն մինչև այժմս այդ բանը չիրագործվեց: Համանման անյարմարութիւն ևս տեղի է ունենում Փիրաբաղարից մինչև Ռաշտ տանող ցամաքային ճանապարհին: Այդ ճանապարհը, թէև տեղի հարթութեան պատճառով շատ հեշտ կարելի է յարմարեցնել, սակայն ուշք դարձնող չը կայ: Աւելի ապահով և լաւ ճանապարհ կը լինէր և մինչև իսկ ազատված կը լինէր այդ և դրա նման շատ անյարմարութիւններից, եթէ միայն այն փողի մի մասը, որ «ռահդարի» է (իւրաքանչիւր բեռնից առնվում է մի տուրք իբրև ճանապարհի փող) կոչվում, գործադրվէր և գետը հասցնվէր մինչև Ռաշտ, այսինքն ծովը կապվէր Ռաշտի հետ ջրային ճանապարհով, որ դժուարութիւն չունի, քանի որ այդ տարածութիւնը շատ քիչ է՝ ընդամենը 6 վերստ: Այն ժամանակ փոխանակ փոքրիկ նաւերի, ուղղակի չոգենաւակը (բարկաս) կարող էր համարձակ մինչև Ռաշտ դալ, որով շատ դիւրացած կը լինէր երթևեկութիւնը և ապրանքներ տեղափոխելը: Մի վեց ամիս սրանից առաջ Փիրաբաղարի գետաբերանից մինչև Էնզէլի լողում էին այդ չոգենաւակներից երեք հատ, որ բաւական հեշտացնում էին երթևեկութիւնը. դրանցից մէկը «Մերկուրի» չոգենաւային ընկերութեանն էր, երկրորդը անդրջրհեղեղեան մի խարխուլ պարսկական չոգենաւակ, իսկ երրորդը նոր ռուսական վաճառականական ընկերութեան՝ «Москва» անունով: Սրանցից առաջինը շատ սակաւ էր գալիս դէպի Փիրաբաղար, իսկ վերջին երկուսը՝ պարբերաբար օրական երկու անդամ: Սակայն և ոչ մէկը երկարատև գոյութիւն չունեցաւ. այժմ երկուսը փչացած վայր են ընկած Էնզէլիի ծովափում, իսկ առաջինը միայն չոգենաւի մօտ է գընում գալիս:

Ռաշտում ռուսաց կառավարութեան կողմից մի հեռագրիչ է նշանակված, որովհետև պարսկական հեռագիրները շատ ուշ և անկանոն են ստացվում: Մտադրութիւն կայ մի հեռագրիչ ևս Էնզէլի նշանակել, վաճառականների հաշուով:

Բ. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Եւրոպայի մէջ համաձայնութիւն է կայացել: Անգլիան և Գերմանիան վճռել են օգնել Չինաստանին:

—«Kreuzzeitung» լրագիրը հաղորդում է, որ շնորհիւ Ռուսաստանի միջամտութեան, Ռումինիայի և Յունաստանի մէջ չուտով կը վերականգնվեն դիպլոմատիական յարաբերութիւնները:

—Անգլիական համայնքների ժողովում մինիստր Մորլէյ յանձնեց հետևեալը: «Յաւալի է, որ լօրդերի ժողովը մերժեց իրլանդական ֆերմէրների վերաբերեալ օրինագիծը: Լօրդերի ժողովի այդ վճիռը, շատ հաւանական է, որ կը բարդի սոցիալական այն դժուարութիւնները, որոնց դէմ մաքառում է համայնքների ժողովը. ինչ որ վերաբերում է այդ դժուարութիւններին, կառավարութիւնը իր պարտքն է համարում կրկին յարուցանել այդ հարցը ապագայ նիստերում:»

—Եօկահամայից «Daily News» լրագրին հեռագրում են, որ չինական կայսրը ամբողջ ժամանակ զբաղված դրութեան մէջ է: Ասում են, որ իբր նա դիտաւորութիւն ունի պաշտօնանկ անել մի քանի բարձրաստիճան օֆիցերներին, որոնց մեղադրում է եռանդի պակասութեան համար եապօնայիների դէմ մղած պատերազմի ժամանակ:

—Հէսմում կալանաւորել են անարխիստներին, որոնք պատրաստվում էին պայթեցնել Ֆրանսիական դեսպանատունը:

—«Times» լրագրին Շանղհայից հեռագրում են, որ ամբողջ Եւրոպական պատերազմական տրամադրութեան մէջ է: Լրագիրները և հրապարակական հեռագրները գրգռում են հասարակաց կարծիքը: Մամուլը պաշտօնական շրջանների անմիջական ազդեցութեան տակ է գտնվում: Եւրոպական զօրքի ընթացքի մասին կատարեալ լռութիւն է պահպանում:

—«Ind. Belge» լրագիրը հաղորդում է, որ Դիպլիի կեանքի դէմ բացված դաւադրութիւնը հաստատվում է: Բարսելօնիայի անարխիստները յանձնարարել էին երեք անարխիստներին՝ դինամիտով սպանել Դիպլիին: Սպանիական պոլիցիան հաղորդեց այդ բանի մասին ֆրանսիական կառավարութեանը: Մէկ ուրիշ դաւադրութիւն բացված է Ֆրանսիայում: Ֆրանսիական ոստիկանութիւնը եռանդով միջոցներ ձեռք առաւ՝ բռնելու դաւադիրներին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Առաջ ենք բերում մի քանի վիճակագրական տեղեկութիւններ Ռուսաստանի զանազան քաղաքներում հրատարակված գրքերի քանակութեան մասին, անցած 1893 թ-ի ընթացքում: Պետերբուրգում 1893 թ. ապագրվել են 3689 զանազան գրուածքներ, որոնցից 181 օտարազգի լեզուներով: Մոսկվայում 2262, 45-ը օտար լեզուներով: Վարշավայում—1055, դրանցից 288 ռուսաց լեզուով: Ապա մնացած քաղաքները, իրանց մէջ տպագրված գրքերի քանակութեան կողմից դասաւորվում են հետևեալ կերպով. նախ գալիս է Կիէվը, ապա Կազանը, յետոյ Օդէսան, Ռիգան և, վերջապէս, իր տպագրած գրուածքների քանակութեան կողմից ուրթերորդ տեղը բռնում է Թիֆլիսը:

***

«Պատուաւոր Լէգիոնի» շքանշան կը-ը ողները: «Новое Время» հաղորդում է, որ

Правительственный Вѣстникъ» լրագրի խմբագիր պ. Սլուչեվսկուն, «Новое Время»-ի հրատարակիչ Ալ. Սուվորինին, «Свѣтъ»-ի հրատարակիչ Վ. Վ. Կոմարովին և «Московскія Вѣдомости» խմբագիր Պետրովսկուն շնորհված են ֆրանսիական «Պատուաւոր Լեգիոնի» շքանշանները։

* * *

Բերլինի համալսարանը ուզում է Բերլինի համալսարանի յայտնի իրաւաբան Բէրների գիտնական գործունէութեան յիսնամեակը։ Բէրներ իր ամբողջ կեանքը նուիրել է Բերլինի համալսարանին։ Այս 50 տարիների ընթացքում նրա ձեռքի տակ անցել են հաղարաւոր իրաւաբաններ։ Բէրներ կատարելապէս հակառակորդ է մահվան պատժի։ Նա էր, որ քարոզում էր, թէ մենամարտը անբարոյականութիւն է։ 1891 թուին նա ապարդէ եկաւ հակասեմիտականութեան դէմ, չը նայելով մինչև անգամ այն բանին, որ նա չէր ցանկանում դուրս գալ գիտական շրջանի սահմաններից։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի։ Կալուածական բանկերի գրաւական թղթեր.—Թիֆլիսի 6%—101¼, 5%—100½, Բուենոս-Այրեսի 6%—101⅕, 5%—100½, Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան օբլիգացիաներ—98¾։—Հրատարակված է թոչակային արկղի վերաբերեալ կանոնադրութիւնը, պետական երկաթուղիներում ծառայողների համար։

ԽԱՐԿՕՎ, 13 օգոստոսի։ «Վլադիմիր Ալէքսէեվ» ընկերութեան բուրդ լուանալու գործարանում, Խարկովի մօտ, այրվեց լուացած և կեղտոտ բուրդ և այլ զոյք 1 միլիոն արժողութեամբ։ Գործարանի շինութիւնը կրակից ազատվեց։

ՍԱՐԱՏՕՎ, 13 օգոստոսի։ Զէմստվոյի բժիշկների նահանգական համագումար ժողովը վճռեց 500 ր. մրցանակ նշանակել՝ ժողովրդական բրոշիւրի համար դիֆտերիտի մասին։

ԼՕՆԴՕՆ, 13 օգոստոսի։ Պարլամենտը փակելու ժամանակ գահական ճառում թագուհին ցաւ է յայտնում Չինաստանի և Եապոնիայի մէջ ըսկսված պատերազմի առիթով, չը նայելով Անգլիայի և Ռուսաստանի ջանքերին՝ առաջն առնելու այդ պատերազմի։ Թագուհին բոլոր միջոցներ ձեռք առաւ չեզոքութիւն պահպանելու համար։

ՇԱՆԳՀԱՅ, 13 օգոստոսի։ Հաստատվում է այն տեղեկութիւնը, որ Եապոնական 19 պատերազմական նաւեր և 13 ապրանքատար նաւեր հասան Չեֆուն։ Դեռ օգոստոսի 18-ին և ափ իջեցրին 3000 հոգուց բաղկացած մի զօրաբաժին, որի վրա դէպի Պէկին գնալու ժամանակ, յարձակվեց 1000 հոգուց բաղկացած չինական հեծելազօրքը։ Չինական հեծելազօրը կորեց Եապոնական զօրաբաժինը, որը մեծ ջարդ կրեց։ Ասում են, որ Եապոնացիների կողմից սպանվեցին 1300 մարդիկ։ Եապոնացիները փախչում էին դէպի ծովափը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի։ Երէկ ճանապարհ ընկաւ երկրագործութեան և պետական կալուածների մինիստրը։ Մինիստրը անձամբ կը ծանոթանայ Կովկասի մետեսական կարիքների հետ, կայցելի հանքային ջրերը, Սև ծովի ափերը, կը ծանօթանայ գաղթականութեան հետ Զէրնօմորեան չրջանում և Անդրկովկասում։ Բացում կը տեսնի նաւթային արդիւնաբերութիւնը և կայցելի Թուրքեստանի երկիրը։

ՇԱՆԳՀԱՅ, 13 օգոստոսի։ Հրատարակված է կայսերական հրաման Մանչուրիայի և Պէկինի նահանգներից տաս տաս հազար մարդ զէնքի կոչելու մասին։ Այդ զօրքերը կը զետեղվեն Տունգչանում, Սան խում և Տեանցզինում։ Կայսրուհին 12 միլիոն «տաէլ» տուեց Լի-Խունգ-Չանգին զինուորական պէտքերի համար։

ԵՕԿՕՀԱՄԱ, 13 օգոստոսի։ Եօկօհամա և Նագասակի նաւահանգիստներում անցքերը ականներով են փակված օտար նաւերը, այդ նաւահանգիստներով անցնելու համար, պէտք է լոցմաններ վերցնեն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի։ Ուէլսի իշխանուհին իր աղջիկներով այս օրերս ճանապարհ է ընկնում դէպի Սպալա։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 12-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ	93	ր. 10	կ.
Բերլին վրա 100 մարկ —	45	ր. 60	»
Պարիզի վրա 100 ֆրանկ —	69	» 92½	»
Ոսկի — — արժէ	7	» 47	»
Մաքսային կուպօնները —	149	» 50	»
Արծաթ — — —	—	» —	»
Բօրսային դիսկօնտ —	5	» 7	»
Պետ. բանկի 5% տոմս 1 չրջանի	—	» —	»
— — — — 2-րդ	—	» —	»
— — — — 3-րդ	—	» —	»
4% պետական բէնտա.	—	» 94	»
5% ոսկեայ բէնտա 1884 թ.	159	» —	»
4½ ոսկեայ փոխառութիւն.	—	» —	»
Արևելեան 5% փոխառ. 1-ին չրջ.	—	» —	»
— — — 2-րդ —	—	» —	»
— — — 3-րդ —	—	» —	»
— — — 4-րդ —	—	» —	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	238	» 50	»
— — երկրորդ —	228	» —	»
Պետական երկաթուղային բէնտա.	101⅝	» —	»
4½ բէնտա	—	» —	»
4% ներքին փոխառութեան . . .	95⅝	» —	»
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	—	» —	»
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.			
Գրաւ. թղթ. — — .	191	» 25	»
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	—	» —	»
4½% գրաւական թղթեր կալուած.			
Պեփոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	152	» 50	»
— — — թղթադ. .	—	» —	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիաները.	100⅞	» —	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100⅞	» —	»
Ոդէսայի — —	101	» —	»
Թիֆլիսի — —	—	» —	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	» —	»
— — Քութայիսի — .	—	» —	»

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

!Զգուշացէք կեղծումներից!
Հիգիէնական
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. ԻՒՐԳԷՆՍ
պրօվիզօրի։
Ոչնչացնում է երեսի դեղին բծեր, մաքրում է արևից այրվածը, ոչնչացնում է պղուկներ և քրտինքը։ Առաջարկվում է որպէս տուալէտի անուշահոտ սապօն բարձր տեսակի։ Ոսկի մեդալ՝ 1893 թ.
Գինը կտորի համար 50 կօպ., ½ կտոր՝ 30 կ.։ Ծախվում է բոլոր դեղագործական մագազիններում և դեղատներում։
Գլխաւոր պահեստ ամբողջ Ռուսաստանի համար։ Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ։ Դէպօ Թիֆլիսում. Դեղագործ. ապր. Կովկ. Ընկ. պահեստում, Ծուրինովի, Պոպովի և Աղմուրովի դեղատներում և Արիստակովի մօտ։ (№ 126) 11—12

ՍՈՒԼԻՄԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիղօնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղ. Ծօվիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
№ 62 21—32

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ
Մեծ պահանջը և ահագին հռչակը մեր հնարած
ԾԱՂԿԱՑ Օ-ԴԷ-ԿՕԼՕՆԻ
ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆԻ ՆԿԱՐՆԵՐՈՎ
ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՓՕՇԻՒ,
ԷԿՍՏՐԱԿՏ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵԱՍԱՄԱՆԻ ԵՒ ՐԵԶԵԴԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿՂԻԿՆԵՐ և այլն
ստիպում է մեզ հետ մրցողներին ՆՄԱՆԵՑՆԵԼ ոչ միայն անունները, այլ և մեր մասնագիտութիւնների ներքին սարքին, որպէս զի դրանով մոլորեցնեն հասարակութիւնը և այդպիսով մեծացնեն իրանց արդիւնքների վաճառումը, և այդ պատճառով խնդրում ենք պատարժան գնողներին, մեր արդիւնքները գնելու ժամանակ, առանձին ուշադրութիւն դարձնել ֆիրմայի և գործարանական մարկայի վրա։
Բարձրագոյն հաստատված ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
БрокаръиК° ВъМОСКВѢ. ФАБРИЧН. ШТЕМПЕЛЬ УТВЕРЖД. ПРАВИТЕЛ. 1864г. 1864г.
3—12 (№ 74—ամ. 15)

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ մատենադարանընթերցարանի համար հարկաւոր է մի գրադարանապետ, որը պէտք է լինի և քարտուղարի օգնականը։ Այդ պաշտօնը ստանձնել ցանկացողները հրաւիրվում են դիմել խորհրդի քարտուղարին, կամ գրաւորապէս կամ անձամբ ընկերութեան նորաբաց գրասենեակը։ Սօլօլակ, Սերգիևսկի փողոց, տուն Ալիխանեանի, առաւօտեան 9—11, կէսօրից յետոյ ժամ 5—8։
(№ 93) 1—3

Իմ հասցէն Թիֆլիսում հետևեալն է։
Тифлисъ, Елизаветинская улица № 192
Хр. М. Кара-Мурза.
2—3 (№ 92) Կարա-Մուրզա

Ծախվում է Կովկասի բոլոր քաղաքների Հայ-գրավաճառանոցներում
ԱՏՐՊԵՏԵԱՆԻ
ԱԼՄԱՍՏ վէպը, բարձր Հայոց իրական կեանքից—2 ր.
ԽԵՒ ԿԱՐԱՊԵՏ վէպը, Թիւրքահայերի կեանքից—1 ր.
ՇՈՒՇԱՆ ողբերգ. օպերայի համար—1 ր.
ՍԱՐԲԱՖ ողբերգ. Թիւրքահայերի պատմական կեանքից 30 կօպ.
(№ 81) 4—5

Կոնտրօնական գրավաճառանոցում ծախվում են
ԼԵՒՕՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ
1) „ԱՅՑ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ" 1890 թ.։ Գինը 60 կօպ.
2) „ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՄԵԶԱՆՈՒՄ". 1890 թ.։ Գինը 20 կօպ.
(№ 88) 2—10

Հ. ԱՒԵՏԻՔ ԿՈՑԼԱՒԻ
ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ
ԲԱՌԳԻՐՔ
1667 էջ. գինը 10 ր.
Ծախվում է 5 ռուբլիով, Խուդավերդեանի մագազինում, Գօլովինսկի պրօսպէկտի վրա։
(№ 91) 3—10

ՕՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիղօնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղ. Ծօվիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
№ 62 21—32

Թիֆլիսի Ս. Դաւիանեան Հաց Օրիորդաց Երկդասեան Դպրոցի վարչութիւնը յայտնում է, որ վերաքննութիւնները և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսվում են օգոստոսի 20-ից։
Նոր աշակերտուհի մտնելու համար պէտք է ա, խնդիր տալ վարչութեան անունով, բ, ներկայացնել մետրիկական և գ, ծաղկի վկայականներ։
(№ 89) 3—4

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ց. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ
II-րդ տարի.
Օգոստոսի 22-ից աշակերտներ ընդունվում են՝ գիշերօթիկ, ցերեկօթիկ և երթևեկ, պատրաստվելու պետական բոլոր դպրոցները մտնելու համար։
Անհրաժեշտ տեղեկութիւնները և ծրագիրը կարելի է ստանալ ամեն օր առաւօտեան 8 ժամից մինչև 1 ժամը, իսկ երեկոյեան 5—8 ժամը։ Հասցէն՝ Тифлисъ, въ Сололакахъ, Садовая улица, д. Шадинова, № 38, противъ Гановской.
(№ 89) 3—5 (6, 11, 13, 17, 27)

ՄՕՍԿՎԱ, ՀԻՒՐԱՆՈՑ
„ՎԷՐՍԱԼ"
(Մեծ Դմիտրովկա և Սօլէշնիկով փողոցների անկիւնում, Զուկսինի տանը)։ Հիւրանոցը ունի ամեն տեսակ յարմարութիւններ և գտնվում է քաղաքի կենտրոնում, թատրոնների մօտ։ Օրական 1 ր. մինչև 10 ր., ամսական 20 ր. մինչև 170 ր.։ Կան բաժանմունքներ ընտանիքների համար և վաճառներ ցանկացողների համար։
(№ 87) 4—5

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մորթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրօնցօվի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. Հիւանդանոցի տակ։
(№ 67) 96—100 (ե. շ.)

Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը ձեռնարկելով բանալու Թիֆլիսում ընկերութեան
ԿԵՆԴՐՕՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ—ԸՆԹԵՐՑԱՐԱՆ,
որի մէջ պէտք է մտնեն բոլոր լոյս տեսած հայերէն գրքերը և լրագիրները, նոյնպէս և ուրիշ լեզուներով տպագրված ընտիր երկասիրութիւններ՝ կովկասագիտութեան և արևելագիտութեան վերաբերեալ, սրանով դիմում է այն անձանց, որոնք կը ցանկանային իրանց մատենադարանները նուիրել կամ վաճառել ընկերութեան՝ բարեհաճեն գրքերի ցուցակները և իրանց պայմաններն ուղարկել ընկերութեան խորհրդին մինչև օգոստոսի 30-ը։
(№ 89) 4—5

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Августа 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 128.